

# Մոտ թվեր

Տրված են  $n$ -նիշանոց երկու  $A$  և  $B$  թվեր: Հարկավոր է գտնել  $B$  թվի թվանշանների տեղափոխությունից ստացվող այն ամենափոքր թիվը, որը  $A$ -ից մեծ է կամ հավասար:

## Մուտք

Մուտքի առաջին տողում տրված է  $A$  թիվը, երկրորդ տողում տրված է  $B$  թիվը: Նրանց թվանշանների  $n$  քանակներն իրար հավասար են,  $1 < n \leq 100000$ :

## Ելք

Ելքում պետք է արտածել մի  $n$  նիշանոց թիվ, որը պետք է պարունակի  $B$  թվի բոլոր թվանշաններն ինչ-որ կարգով, և լինի այն ամենափոքր թիվը, որն  $A$ -ից մեծ է կամ հավասար է  $A$ -ին: Եթե այդպիսի թիվ գոյություն չունի, պետք է արտածել 0:

## Օրինակներ

**Մուտք.**

3075

6604

**Ելք.**

4066

**Մուտք.**

6604

3012

**Ելք.**

0